ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո ւ Մ

12 11 61
«------» ---------- 2013թ. Թիվ ----------

ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԶԻ ՓՈՂՈՑԻ ԵՐԹԵՎԵԿԵԼԻ ՄԱՍԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԵԿ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Արտաշատ քաղաքի մի շարք փողոցների, այդ թվում Արազի փողոցի երթևեկելի մասը գտնվում են ծայրահեղ անբարեկարգ վիճակում: Քանի որ Արազի փողոցը համարվում է քաղաքի կենտրոնական փողոցներից մեկը, այդ փողոցի վրա է Հայաստանի Հանրապետության թիվ N զորամասը, քաղաքի կոմունիկացիաները սպասարկող երկու խոշոր կազմակերպություններ, ուստի անհրաժեշտություն է առաջանում առաջին հերթին որոշակի բարեկարգման աշխատանքներ կատարել Արազի փողոցում: Բարեկարգման աշխատանքների սկիզբը նախատեսվում է 16.11.2013թ. – ավարտ 27.11.2013թ.:

Նման ժամանակացույցից և եղանակային հնարավոր ոչ բարենպաստ պայմաններից ծագել է գնման աշխատանքների անհետաձգելի պահանջ: Նման իրավիճակից ելնելով, գնման այլ ընթացակարգի կիրառումը, ժամկետի առումով անհնար է:

Գնման ենթակա աշխատանքների ձեռքբերումը հրատապ է և հնարավոր է միայն բանակցային ընթացակարգ առանց հայտարարության :

Ելնելով վերոհիշյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 10.02.2011թ. թիվ 168 որոշման թիվ 32-րդ հոդվածի 5-րդ կետի „ա „ ենթակետի պահանջներից.

Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Թույլատրել Արտաշատ քաղաքի Արազի փողոցի երթևեկելի մասի բարեկարգման աշխատանքների գնումը կատարել բանակցային ընթացակարգ առանց հայտարարության :

Ավետիսյան Հերմոն	Դերմոյան Արման
Թադևոսյան Արման	Հայրապետյան Դուզան
Հովհաննիսյան Վազգեն	Մելքոնյան Վանիկ
Նազարյան Գոռ	Ղոնոյան Գարրիել

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Գ.ՄՈՒՐԱԴՅԱՆ